

«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ

«Զանգեզուր» արգելավայրը ստեղծվել է ՀՀ կառավարության 15.10.2009 թ. N 1187-Ն որոշմամբ: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան և Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ զբաղեցնելով 17368.77 հա տարածք: Նպատակն է պահպանել մարգագետնատափաստանային, մերձալպյան և ալպյան մարգագետնային էկոհամակարգերը:

Արգելավայրի գեղատեսիլ վայրերից են Զանգեզուրի լեռնաշղթայի Կապուտջուղ, Փառական, Միսակապար լեռնագագաթները, Քաջարանցի և Ողջիի կենսաբազմազանությամբ հարուստ ձորերը, ինչպես նաև Կապուտան և Գոգի բարձրալեռնային լճերը, որոնք էկոզոոաշրջության դասական ռեսուրսներ են:



Կապուտջուղ



Փառական



Ողջի գետի վերին հոսանքը



Միսակապար և Քաջարանց ձորը



Կապուտան լիճ



Գոգի լիճ

Հարուստ ու բազմազան է արգելավայրի բուսական աշխարհը, որում հաշվարկվում են 13 տեսակի սնկեր և 696 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնցից 28-ը գրանցված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: Արգելավայրի բուսական աշխարհի ինքնատիպությունը պայմանավորված է նաև 57 էնդեմիկ բուսատեսակների առկայությամբ, որոնցից 8-ը Հայաստանի, 18-ը՝ Հարավային Անդրկովկասի, 13-ը՝ Անդրկովկասի և 18-ը՝ Գովկասի էնդեմիկներ:

Գիտական և բնապահպանական տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր գրքում գրանցված հետևյալ էնդեմիկ տեսակները՝

1. Հայաստանի էնդեմիկ **Զանգակ զանգեզուրի-Campanula zangezura (Lipsky) Kolak. et Serdjuk.** (Կապուտջուղ, Փառական, Միսակապար, 1400-3000 մ).
2. Հարավային Անդրկովկասի էնդեմիկներ **Վարդակակաչ Սոսնովսկու-Tulipa sosnowskyi Achv. et Mirzoeva** (Քիրս, 1500-2500 մ) և **Ողջախոտ գարշահոտ-Delphinium foetidum Lomak.** (Կապուտջուղ, Փարական, Քաջարանցի ձոր, 2700-3600 մ).
3. Գովկասի էնդեմիկ **Վիշապագլուխ ողկույզային-Dracocephalum botryoides Stev.** (Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաներ, 2800-3800 մ):



Զանգակ Զանգեզուրի



Վարդակակաչ Սոսնովսկու



Ողջախոտ գարշահոտ



Վիշապագլուխ ողկույզային

Կարևոր նշանակություն ունեն նաև Կարմիր գրքում գրանցված այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ *Սոխ Դերդերիանի-Allium derderianum Regel* (Բարգուշատի լեռնաշղթա, Կապուտջուղ, 2700-3400 մ), *Լոջուն Թախտաջյանի-Isatis takhtajanii V.E. Avet.* (Չանգեզուրի լեռնաշղթա. Կապուտջուղ, Գոգի լիճ, 2200-3500 մ), *Գնդապտուղ կասպիական-Physoptychis caspica (Hablitz) V.V. Botschantz.* (Չանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաներ, 2800-3600 մ), *Վավիլովիա նրբագեղ-Vavilovia formosa (Steven) Fed.* (Կապուտջուղ, Փառական, 2800-3500 մ) տեսակները



Սոխ Դերդերիանի



Լոջուն Թախտաջյանի



Գնդապտուղ կասպիական



Վավիլովիա նրբագեղ

«Չանգեզուր» արգելավայրի բուսական աշխարհը հարստացնում են նաև ավելի, քան 500 տեսակի օգտակար բույսեր՝ ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական, գեղագարդային, որոնցից տեղի բնակչության կողմից կենցաղային կարիքների համար մթերվում են հետևյալ տեսակները:

1. *Շուշանաբանջար խոշորապտուղ (Chaerophyllum macrospermum)* – Երկամյա բույս է, դեղատու, օգտագործվում է մատղաշ ցողունը և տերևները: Հարկավոր է մթերել վաղ գարնանը: Խախտված վայրերում այն հանդիպում է խիտ համակեցություններով, ոչ խախտված վայրերում՝ բնական պոպուլյացիաներում աճում է անհամեմատ նոսր՝ հանդիպելով առանձին անհատներով 4-5 մինչև 10 մ իրարից հեռավորության վրա:

2. *Շրեշ ուշագրավ (Eremurus spectabilis N. Bieb.)* - ուտելի, դեղատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Ուտելու համար օգտագործվում են մատղաշ տերևները, իսկ կոճղարմատը օգտագործվում է որպես հումք բարձր որակի սոսիսների պատրաստման համար: Հիմնականում աճում է ուղղաձիգ ժայռոտ լանջերի վրա:



3. *Անթառամ ծայրավոր (Helichrysum plicatum DC.)* – դեղատու բույս է: Օգտագործվում են ծաղիկները:



4. *Քարխառ կոշտ (Symphytum asperum)* - Օգտագործվում են կոճղարմատները: Հանդիպում է անտառներում, գետերի մոտակայքում, ինչպես նաև խախտված ապրելավայրերում առաջացնում է մոնոդոմինանտ բուսուտներ, որոնք հեռանկարային են արդյունագործական մթերման համար:



5. *Մրհունդ խոցված (Hypericum perforatum L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



6. *Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



7. *Զիվան հսկայական (Cephalaria gigantea (Ledeb.) Bobr.)* - դեղատու բույս է: Օգտագործվում են միայն ծաղկած գլխիկները: Բույսը խոշոր է և աճում է բավական մեծ խմբերով:



Հարուստ ու բազմազան է նաև «Ջանգեզուր» արգելավայրի **կենդանական աշխարհը**, որում հաշվարկվում են 61 տեսակի անողնաշար և 89 տեսակի ողնաշարավոր կենդանիներ: Դրանցից 25-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից հիշատակման են արժանի անողնաշարներից **Ապոլոնը կամ ստագաստաթիթեռը-Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko** (Քաջարան, 2300-2500 մ):



Սողուններից՝ Հայաստանի էնդեմիկ **Հայկական լեռնատափաստանային իծը-Vipera (Pelias) eriwanensis** (1200-3000 մ),



Հայկական իծը կամ Ռադդեի իծը (Vipera (Montivipera)raddei, Boettger (Գեղի, Լեռնաձոր, 1300-2700 մ):



Թռչուններից՝ **քարարծիվը-Aquila chrysaetus** (Ջանգեզուրի, Բարգուշատի լեռնաշղթաներ, 1200-3000 մ),



զառնանգղը-*Gypaetus barbatus* (Զանգեզուրի, Բարգուշատի լեռնաշղթաներ, 1000-2700 մ),



Կաթնասուններից՝ **Ընձաաղյուծը**-*Pantera pardus Linnaeus* (Կապուտջուղ, Բարգուշատի լեռնաշղթա, 1100-3000 մ),



սպիտակագլուխ անգղը-*Gyps fulvus* (Զանգեզուրի, Բարգուշատի լեռնաշղթաներ, 1000-3100 մ):



Քեզաղյան այծը-*Capra aegagrus Erxleben* (Բարգուշատի լեռնաշղթա, 1100-3200 մ),



Անտառակատուն-Felis silvestris Schreber (Բարգուշատի լեռնաշղթա, 1000-2500 մ),



Գորշ արջը-Ursus arctos Linnaeus (Բարգուշատի լեռնաշղթա, 1000-3000 մ) և այլն:



«Ջանգեզուր» պետական արգելավայրի տարածքը Էկոլոգիական զբոսաշրջության իրականացման յուրահատուկ վայրերից է, որտեղ այն կարող է դրսևորվել այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ հետիոտն, արկածային, թեմատիկ (բուսական և կենդանական տեսակների դիտարկումներ), լուսանկարչական: Նպատակահարմար է Էկոզբոսաշրջային երթուղիներում ընդգրկել նաև արգելավայրին հարակից պատմամշակութային հուշարձանները: Վերջիններիս թվում հիշատակման են արժանի Վահանավանքը, Հալիձորի բերդը, Բաղաբերդը:



Վահանավանք

Հալիձորի բերդ



Հալիձոր բերդի եկեղեցին

Բաղաբերդ

<<Զանգեգուր>> պետական արգելավայրը կառավարվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Շիկահող>> պետական արգելոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է՝

1. ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.
2. պահպանության ենթակա բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.
3. որսորդությունը, բացառությամբ սիրողական ձկնորսության.
4. բույսերի և կենդանիների օտարածին տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.
5. անտառահատումները, բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների.
6. թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.
7. ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը.
8. ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.
9. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտումով), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների, լցակույտերի, պոչամբարների և հանքարդյունաբերության հետ առնչվող ցանկացած այլ օբյեկտների տեղաբաշխումը.
10. տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունն ու շահագործումը.
11. ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը: